

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ. հունիսի 13-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 30-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ.

1. Քաղաքացիական իրավունքի, Քաղաքացիական դատավարության, Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնների վարիչների ընտրություններ:

2. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ. Խաչիկյան):

3. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին (զեկ.՝ պետական պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

4. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Դիլբանդյան):

5. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:

6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին:

7. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:

8. Ընթացիկ հարցեր:

1. Քաղաքացիական իրավունքի, Քաղաքացիական դատավարության, Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնների վարիչների ընտրություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ս. Դիլբանդյանը հայտնեց, որ

ա/ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Արմեն Հայկյանցը,

բ/ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Սերգեյ Մեղրյանը,

գ/ Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Վիգեն Քոչարյանը:

Ելույթ ունեցողը ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալների հետ, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդների թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնների դրական կարծիքները և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթ ունեցան նաև ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Ղազինյանը, Վ. Հովհաննիսյանը, Հ. Խաչիկյանը, Դ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի վերը նշված պաշտոնների համար Արմեն Հայկյանցի, Վահրամ Ավետիսյանի, Մերգեյ Մեդրյանի, Վիգեն Քոչարյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ՝ Ա. Ղազիսյան, անդամներ՝ Ա. Պետրոսյան և Ս. Վարդանյան (ՈւԽ նախագահ):

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել դրա 32 անդամներից 30-ը, որոնք բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

ա/ Արմեն Հայկյանցին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 8 անդամ, դեմ՝ 21, մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր,

բ/ Վահրամ Ավետիսյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 21 անդամ, դեմ՝ 8, մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

գ/ Վիգեն Քոչարյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 29 անդամ, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ չկա:

դ/ Մերգեյ Մեդրյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 28 անդամ, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ քվեարկության արդյունքները,

2. ա/ Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վահրամ Ավետիսյանին համարել ընտրված Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

բ/ Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վիգեն Քոչարյանին համարել ընտրված Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

գ/ Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Մերգեյ Մեդրյանին համարել ընտրված Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ. Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկանի տեղակալ Հ. Խաչիկյանը ներկայացրեց 2012-2013 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ըստ այդմ՝ պաշտպանության է ներկայացվել 71 մագիստրոսական թեզեր: Ավարտական աշխատանքներ է ներկայացրել և պետական քննություններ հանձնել 152 ուսանող:

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունից ու պետական քննություններից ուսանողների ստացած գնահատականներն ունեն հետևյալ պատկերը.

Բակալավրիատում քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 37 ուսանող ստացել է գերազանց, 25 ուսանող՝ լավ, 2 բավարար գնահատականներ: Մագիստրատուրայում քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 19 ուսանող ստացել է գերազանց, 3 ուսանող՝ լավ գնահատականներ: Գործարարական մասնագիտացմամբ 8 ուսանող ստացել է գերազանց, 3 ուսանող՝ լավ գնահատականներ:

Բակալավրիատում սահմանադրաիրավական մասնագիտացմամբ 5 ուսանող ստացել է գերազանց, 8 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար, իսկ մեկ ուսանող չի ներկայացել քննությանը: Մագիստրատուրայում սահմանադրաիրավական մասնագիտացմամբ 7 ուսանող ստացել է գերազանց, 1 ուսանող՝ լավ գնահատականներ:

Բակալավրիատում քրեաիրավական մասնագիտացմամբ 11 ուսանող ստացել է գերազանց, 35 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար գնահատականներ, իսկ մեկ ուսանող՝ անբավարար: Մագիստրատուրայում քրեաիրավական մասնագիտացմամբ 8 ուսանող ստացել է գերազանց, 2 ուսանող՝ լավ գնահատականներ :

Բակլավրիատում միջազգային իրավական մասնագիտացմամբ 6 ուսանող ստացել է գերազանց, 19 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար, գնահատականներ, իսկ մեկ ուսանող չի ներկայացել քննությանը: Մագիստրատուրայում միջազգային իրավական մասնագիտացմամբ 8 ուսանող ստացել է գերազանց, 4 ուսանող՝ լավ գնահատականներ: Եվրոպական իրավունք մասնագիտացմամբ 5 ուսանող ստացել է գերազանց, 1 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին ղեկանի տեղակալի հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին (զեկ.՝ պետական պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2012-2013 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակլավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Ըստ այդմ, բարձր գնահատվեց ղեկանատի աշխատանքը՝ պետական քննությունների անցկացումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Մասնավորապես նշվեց, որ հանձնաժողովի անդամներին ժամանակին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ քննությունների օրերի, ժամերի, հարցաշարերի և քննության անցկացման հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկատվություն: Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են ղեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց որևէ շեղման:

Դրական համարվեց այն, որ նախորդ տարվա համեմատ այս տարի էլ ավելի է բարձրացել ուսանողների պատրաստվածության մակարդակը, նրանց պատասխանների և բանավոր խոսքի արտահայտման որակը, կատարվել են ավելի արդիական թեմաներով գիտահետազոտական աշխատանքներ, գրեթե կատարյալ մակարդակի վրա են գտնվել աշխատանքների վերաբերյալ ընդդիմախոսների գրախոսականները, թե ծավալների, թե բովանդակության և սուր դիտողությունների առումով՝ իրապես արտացոլելով աշխատանքի առավելություններն ու թերությունները:

Այնուամենայնիվ, պետական քննական հանձնաժողովների նախաձեռնողների ղեկույցներում տեղ են գտել նաև դիտողություններ ու առաջարկություններ, որոնք ուղղված են կրթական գործընթացների որակի հետագա բարելավմանը և դրանով իսկ որակյալ կադրերի պատրաստմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-2013 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

4. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Դիլբանդյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ռ. Եղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել դրական:

5. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ուժեղ կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունելի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում Ուժեղ կատարած աշխատանքը գնահատել դրական:

6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին:

6.1. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Սայադ Բադալյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Սայադ Բադալյանը հաշվետու տարում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 7 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 2 կրեդիտ պրակտիկայից և 51 կրեդիտ հետազոտական աշխատանքից (այդ թվում՝ 6 կրեդիտ գիտական սեմինարներից, 45 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից), ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.2. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Արմեն Գրիգորյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մազարյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Արմեն Գրիգորյանը հաշվետու տարում ձեռք է բերել 61 կրեդիտ, ներառյալ՝ 7 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 3 կրեդիտ ընտրովի դասընթացներից, 4 կրեդիտ հաշվետու ժամանակահատվածի երկրորդ տարում հանձնած մասնագիտական որակավորման քննությունից, 2 կրեդիտ պրակտիկայից, 4 կրեդիտ գիտական սեմինարներից, ինչպես նաև 48 կրեդիտ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.3. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Հայկ Սարգսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաշվի առնելով, որ Հայկ Սարգսյանը հաշվետու տարում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 10 կրեդիտ՝ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 2 կրեդիտ՝ պրակտիկայից, 42 կրեդիտ կրեդիտ հետազոտական աշխատանքից(այդ թվում՝ 2 կրեդիտ գիտական սեմինարներից, 40 կրեդիտ գիտահետազոտական աշխատանքներից), իսկ հետազոտողի ատեստավորման համար ըստ սահմանված կարգի պահանջվում է նվազագույնը 50 կրեդիտ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.4. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Մհեր Մկրտչյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաշվի առնելով, որ Մհեր Մկրտչյանը հաշվետու տարում ձեռք է բերել 56 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ՝ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6

կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 30 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.5. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Տիգրան Գրիգորյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ.Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաշվի առնելով, որ Տիգրան Գրիգորյանը հաշվետու տարում ձեռք է բերել 74 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ՝ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 15 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ՝ պրակտիկայից, 35 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.6. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Վահագն Գրիգորյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ.Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաշվի առնելով, որ Վահագն Գրիգորյանը հաշվետու տարում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 16 կրեդիտ՝ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 1 կրեդիտ՝ պրակտիկայից, 34 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.7. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Արսեն Թավադյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ.Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաշվի առնելով, որ Արսեն Թավադյանը հաշվետու տարում ձեռք է բերել 60 կրեդիտ, ներառյալ՝ 10 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 1 կրեդիտ՝ պրակտիկայից, 49 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից (այդ թվում՝ 6 կրեդիտ գիտական սեմինարից, 43 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից), ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.8. ԼՍԵՑԻՆ. Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Նինա Կուցանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ռ.Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաստատել Նինա Կուցանյանի «ՀՀ ժառանգման իրավունքի արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները» ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ.00.03. «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»:

բ) Նինա Կուցանյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցին:

7. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:

7.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ «Գործարարական իրավունք», «Շրջակա միջավայրի իրավունք», «Հողային իրավունք»,

«Տեղեկատվական իրավունք», «Ֆինանսական իրավունք» ուսումնական-առարկայական ծրագրերը տպագրության երաշխավորելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Այվազյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ ներկայացված ծրագրերը կազմված են Ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից ընդունված՝ ուսանողամետ դասընթացի չափանիշներին համապատասխան և առկա է մեթոդական խորհրդի դրական կարծիքը՝ երաշխավորել տպագրության:

7.2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ «Կրիմինալիստիկայի գործնական հիմունքները» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը /հեղինակներ՝ վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան/ տպագրության երաշխավորելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Դիլբանդյանը, Ա. Մարգարյանը, Ռ. Մելիքյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ նշված աշխատությունը գրված է պարզաձև գիտական մակարդակով և ունի կարևոր պրակտիկ նշանակություն և առկա է մեթոդական խորհրդի դրական կարծիքը՝ երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան